## §35. Վերարտադրողական համակարգի կառուցվածքը

1.Լրացրե՛ք աղյուսակը՝ տեղադրելով **տղայի և աղջկա հասունացման շրջանի ներքռիշյալ երկրորդային սեռական հատկանիշները** համապատասխան սյունակում:

| Իգական | Արական |
|---|---|
| 1.<br>2.<br>3. | 1.<br>2.<br>3. |

*Երկրորդային սեռական հատկանիշներ.*

1. *Սեռական հասունացման սկիզբը 10-11 տարեկանում*
2. *Սեռական հասունացման սկիզբը 9-10 տարեկանում*
3. *Սկսվում է դաշտանը*
4. *Սկսվում է սերմնարտադրությունը*
5. *Կրծքագեղձերի մեծացում*
6. *Ձայնի կոշտացում*
7. *«Ադամախնձորի» արտահայտված դառնալը*
8. *Կոնքագոտու լայնացում*
9. *Քրտնարտադրության ավելացում*
10. *Ճարպոտության ավելացում*

2.Տետրում լրացրե՛ք **հարցաթերթիկը**՝ համապատասխան սյունակում դնելով (+) նշանը: Պատասխանները քննարկե՛ք ուսուցչի (ծնողի) հետ:

| | Ճիշտ է | Սխալ է | Չգիտեմ |
|---|---|---|---|
| 1. Հասունացման շրջանում տեղի են ունենում միայն ֆիզիոլոգիական փոփոխություններ: | | | |
| 2. Հասունացման շրջանում տեղի են ունենում ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխություններ: | | | |
| 3. Եթե դեռահասը կենսաբանորեն հասուն է, նա կարող է ծնող դառնալ: | | | |
| 4. Լիակատար հոգեբանական, սոցիալական հասունացման երիտասարդները հասնում են 22-25 տարեկանում: | | | |
| 5. Հոգեներգործուն նյութերը բացասաբար են ազդում մարդու աճման բոլոր փուլերում: | | | |